REPUBLIC OF ARMENIA
KOTAYK REGION MAYAKOVSKI VILLAGE
МАЯКОВСКИЙ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
КОТАЙКСКИЙ РЕГИОН СЕЛО

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք.
գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

N 189
01 սեպտեմբերի 2017 թ.

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ.ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Գուլոյան

''Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ է ներկայացվում 2017 թվականի օգոստոս ամսվա Մայակովսկի համայնքի ղեկավարի կողմից ընդունված որոշումների պատճեները. / թիվ 66-Ա, 67-Ա,68-Ա, 69-Ա,70-Ա / :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» օգոստոսի 2017 թվական N 66-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 48 –րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Մայակովսկի համայնքի բնակիչ Շողիկ Կարապետյանի դիմումը օգնության մասին և համայնքի սոցիալական հանձնաժողովի եզրակացությունը, հաշվի առնելով նրա ընտանիքի սոցիալական վիճակը. ***որոշում եմ***՝

1. Մայակովսկի համայնքի 2017 թվականի բյուջեի « Սոցիալական օգնություններ » 4729 հոդվածից Շողիկ Կարապետյանին տալ 30. 000 / երեսուն հազար/ դրամ դրամական օգնություն:

2.Հանձնարարել հաշվապահ Ա. Հարությունյանին կատարել վճարում :

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2017թ.օգոստոսի 25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» օգոստոսի 2017թվական N 67-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Մայակովսկի համայնքի բնակիչ Անահիտ Սարոյի Խաչատրյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Մայակովսկի 12-րդ փողոցի թիվ 21 հասցեի բնակավայրի կառուցապատման հողամասում՝ ծածկագիր 07-043-0051-0004 (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական, քարտեզագրողի,գեոդեզիստի,չափագրողի,հողաշինարարի որակավորում ունեցող ԱՁ Սամվել Առաքելի Ավետիսյանի կողմից 2017 թվականի օգոստոսի 21-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը) ինքնակամ կառուցված շինությունները: Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և ԱՁ Սամվել Առաքելի Ավետիսյանի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Անահիտ Սարոյի Խաչատրյանին սեփականության իրավունքով իրեն պատկանող Մայակովսկի 12-րդ փողոցի թիվ 21 հասցեի բնակավայրի հողամասում 2016 թվականին ինքնակամ կառուցել է շինություններ՝բնակելի տուն 223.64 քառ.մետր, աստիճանավանդակ 1.60 քառ.մետր, ավտոտնակ՝ 32.36 քառ.մետր, օժանդակ շինություն՝ 1.20 քառ.մետր, պարիսպ 20.33 քառ.մետր, ընդամենը՝ 279.13 քառ.մետր արտաքին մակերեսով: Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Անահիտ Սարոյի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի 12-րդ փողոցի թիվ 21 հասցեի բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,

ո ր ո շ ո ւ մ ե մ.

1. Անահիտ Սարոյի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի 12-րդ փողոցի թիվ 21 հասցեի բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունները համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Մայակովսկի համայնքի բյուջեի N 900105222229 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 396 365 (երեք հարյուր իննսունվեց հազար երեք հարյուր վաթսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Գեղամ Ասատրյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Վեներա Փայտյանը :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2017թ.օգոստոսի 25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» օգոստոսի 2017 թվական N 68-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Գարուն Եփրեմյանին սեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի 15-րդ փողոց, 6-րդ փակուղի, թիվ 1 հասցեի տնամերձ հողակտորում տալ բնակելի տան և պարսպապատման շինարարության թույլտվություն:
2. Պարտավորեցնել Գարուն Եփրեմյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի

2017թ.օգոստոսի 31

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» օգոստոսի 2017թվական N 69-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Մայակովսկի համայնքի բնակիչ Արմեն Ազիզբեկի Մկրտչյանի լիազոր անձ Ծաղիկ Մանուկյանի 2017 թվականի օգոստոսի 28-ի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով Արմեն Մկրտչյանին պատկանող Մայակովսկի 11-րդ փողոցի թիվ 1 հասցեի բնակելի կառուցապատման հողամասում՝ ծածկագիր 07-043-0053-0002 (հիմք՝ քարտեզագրողի , գեոդեզիստի,չափագրողի,հողաշինարարի որակավորում ունեցող «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից 2017 թվականի օգոստոսի 30-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը) ինքնակամ կառուցված շինությունները:

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Արմեն Մկրտչյանին սեփականության իրավունքով իրեն պատկանող Մայակովսկի 11-րդ փողոցի թիվ 1 հասցեի բնակելի կառուցապատման հողամասում մինչև 2001 թվականը ինքնակամ կառուցել է բնակելի տուն 541.0 քառ.մետր, շինություններ՝ 55.87 քառ.մետր, , ինչպես նաև 2002 թվականին կառուցվել է ինքնակամ զուգարան 2.05 քառ.մետր:

Ղեկավարվելով կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Արմեն Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի 11-րդ փողոցի թիվ 1 հասցեի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,

ո ր ո շ ո ւ մ ե մ.

1.Արմեն Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի 11-րդ փողոցի թիվ 1 հասցեի բնակելի կառուցապատման հողամասում

ինքնակամ կառուցված շինությունները համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Մայակովսկի համայնքի բյուջեի N 900105222229 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 1988 (հազար ինը հարյուր ութսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Գեղամ Ասատրյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Վեներա Փայտյանը :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2017թ.օգոստոսի 31

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» օգոստոսի 2017թվական N 70-Ա

ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿՏԱՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասի իրավական կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի և 7-րդ հոդվածի 2-րդ մասի ա) ենթակետի դրույթներով, հաշվի առնելով, որ ինքնակամ զբաղեցրած հողամասը և օրինական հատկացված հողամասը մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ունեցել է նույն սահմանագիծը և փաստացի օգտագործել է սեփականատիրոջ կողմից, քարտեզագրվել և նույն սահմանագծով ճանաչվել է որպես մեկ միավոր,ինչը երևում է համայնքի հողակադաստրային քարտեզում և այն որ նշված ինքնակամ զբաղեցրած հողամասը չիգտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի շարքում, ինժեներատրանսպորտայինօբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, սեփականության իրավունքի ճանաչումը չիսահմանափակվում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ՝***

1. Մայակովսկի համայնքի բնակիչ Արմեն Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի համայնքի 11-րդ փողոցի, թիվ 1 հասցեի տնամերձ հողամասին կից ինքնակամ զբաղեցրած 0.00076 հա հողամասը ճանաչել օրինական:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2017թ.օգոստոսի 31